

ՆՇԱՆՆԵՐԻ ՊԱՏԿԵՐԱՅԻՆ ՏԱՐՐԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴԱՍԱԿԱՐԳՈՒՄԸ ՀԻՄՆԱԴՐՈՂ ՎԻԵՆՆԱՅԻ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐ

Պայմանավորվող կողմերը,

հաշվի առնելով 1883 թ. մարտի 20-ին ընդունված, 1900 թ. դեկտեմբերի 14-ին Բրյուսելում, 1911 թ. հունիսի 2-ին Վաշինգտոնում, 1925 թ. նոյեմբերի 6-ին Հաագայում, 1934 թ. հունիսի 2-ին Լոնդոնում, 1958 թ. հոկտեմբերի 31-ին Լիսաբոնում եւ 1967 թ. հուլիսի 14-ին Ստոկհոլմում վերանայված Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի 19-րդ հոդվածը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Հատուկ միության ստեղծումը. միջազգային դասակարգման ընդունումը

Երկրները, որոնց նկատմամբ կիրառվում է սույն Համաձայնագիրը, կազմում են Հատուկ միություն եւ ընդունում են նշանների պատկերային տարրերի համար միասնական դասակարգում (այսուհետ՝ Պատկերային տարրերի դասակարգում):

ՀՈԴՎԱԾ 2

Պատկերային տարրերի դասակարգման սահմանումը եւ ի պահ հանձնելը

1) Պատկերային տարրերի դասակարգումը ներառում է դասերի, բաժինների եւ խմբերի ցանկը, որտեղ դասակարգվում են նշանների պատկերային տարրերը, հնարավոր է՝ բացատրական նշումների հետ միասին:

2) Պատկերային տարրերի դասակարգումը ներառված է մեկ բնօրինակի մեջ, անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով, որը ստորագրված է Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության Գլխավոր տնօրենի կողմից (այսուհետ՝ Գլխավոր տնօրեն եւ Կազմակերպություն), եւ ի պահ է հանձնվում նրան այն ժամանակ, երբ սույն Համաձայնագիրը համարվում է բաց ստորագրման համար:

3) 5(3)(i) հոդվածում նշված Փոփոխությունները եւ լրացումները նույնպես ներառվում են Գլխավոր տնօրենի կողմից ստորագրված մեկ բնօրինակում՝ անգլերեն եւ ֆրանսերեն լեզուներով, եւ ի պահ են հանձնվում նրան:

ՀՈԴՎԱԾ 3

Պատկերային տարրերի դասակարգման լեզուները

1) Պատկերային տարրերի դասակարգումը հաստատվում է անգլերեն եւ ֆրանսերեն, որի երկու տեքստերն էլ հավասարազոր են:

2) Կազմակերպության միջազգային բյուրոն (այսուհետ՝ Միջազգային բյուրո) շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո նախապատրաստում է պատկերային տարրերի դասակարգման պաշտոնական տեքստերն այն լեզուներով, որոնք որոշում է 7-րդ հոդվածում նշված Ասամբլեան՝ նույն հոդվածի (2)(ա)(vi) կետի համաձայն:

ՀՈԴՎԱԾ 4

Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումը

1) Համաձայն սույն Համաձայնագրով սահմանված պահանջների՝ Պատկերային տարրերի դասակարգումը Հատուկ միության յուրաքանչյուր երկրում ունի այն նշանակությունը, որը նրան տրվում է այդ երկրում: Մասնավորապես, Պատկերային տարրերի դասակարգումը չի պարտավորեցնում Հատուկ միության երկրներին տվյալ նշանին տրված պահպանության ծավալի առումով:

2) Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչությունները իրավունք ունեն Պատկերային տարրերի դասակարգումն օգտագործել որպես հիմնական կամ լրացուցիչ համակարգ:

3) Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչությունները պաշտոնական փաստաթղթերում եւ նշանների գրանցման ու ժամկետի երկարաձգման մասին հրապարակումներում, որտեղ այդ նշանների պատկերային տարրերը գետեղվում են, ներառում են դասերի, բաժինների եւ խմբերի համարները:

4) Նշված համարներին նախորդում են "Պատկերային տարրերի դասակարգում" բառերը կամ դրանց հապավումը, որը որոշվում է 5-րդ հոդվածում նշված Փորձագետների կոմիտեի կողմից:

5) Ցանկացած երկիր իր ստորագրելու կամ վավերագիրն ի պահ հանձնելու կամ միանալու պահից կարող է հայտարարել, որ ինքը չի պարտավորվում նշանների գրանցման ու ժամկետի երկարաձգման մասին պաշտոնական փաստաթղթերում եւ հրապարակումներում ընդգրկել բոլոր կամ որոշ խմբերի համարները:

6) Եթե Հատուկ միության որեւէ երկիր նշանների գրանցումը հանձնարարում է միջկառավարական մարմնի, ապա նա ձեռնարկում է այդ մարմնի կողմից սույն հոդվածին համապատասխան Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումն ապահովող բոլոր հնարավոր միջոցները:

ՀՈԴՎԱԾ 5 Փորձագետների կոմիտե

1) Փորձագետների կոմիտեն հիմնադրվում է այնտեղ, որտեղ Հատուկ միության յուրաքանչյուր երկիր ներկայացված է:

2) ա) Գլխավոր տնօրենը կարող է եւ, Փորձագետների կոմիտեի խնդրանքով, պարտավոր է Փորձագետների կոմիտեի նիստերին որպես դիտորդ ներկայացված լինելու համար հրավիրել այն երկրներին, որոնք Հատուկ միության անդամ չեն, բայց Կազմակերպության կամ Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի անդամներ են:

բ) Գլխավոր տնօրենը հրավիրում է Փորձագետների կոմիտեի նիստերին որպես դիտորդներ ներկայացված լինելու համար նշանների բնագավառում մասնագիտացած միջկառավարական կազմակերպություններին, որոնց անդամ երկրներից առնվազն մեկը սույն Համաձայնագրի կողմ է:

գ) Գլխավոր տնօրենը կարող է եւ, Փորձագետների կոմիտեի խնդրանքով, պարտավոր է հրավիրել այլ միջկառավարական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների՝ մասնակցելու իրենց հետաքրքրող քննարկումներին:

3) Փորձագետների կոմիտեն՝

i) ուղղումներ եւ լրացումներ է կատարում Պատկերային տարրերի դասակարգման մեջ.

ii) Հատուկ միության երկրներին ուղարկում է հանձնարարականներ, որոնք դյուրացնում են Պատկերային տարրերի դասակարգման օգտագործումը եւ աջակցում են դրա միատեսակ կիրառմանը.

iii) ձեռնարկում է բոլոր այլ միջոցները, որոնք Հատուկ միության կամ Կազմակերպության բյուջեի համար չառաջացնելով ֆինանսական հետեւանքներ՝ նպաստում

են զարգացող երկրների կողմից Պատկերային տարրերի դասակարգման կիրառմանը.

iv) իրավասու է ստեղծելու ենթակոմիտեներ եւ աշխատանքային խմբեր:

4) Փորձագետների կոմիտեն ընդունում է ընթացակարգի իր կանոնները: Վերջինս հնարավորություն է տալիս 2(բ) կետում նշված միջկառավարական կազմակերպություններին՝ մասնակցելու Փորձագետների կոմիտեի ենթակոմիտեների եւ աշխատանքային խմբերի նիստերին, ինչը կարող է եապես նպաստել Պատկերային տարրերի

դասակարգման զարգացմանը:

5) Պատկերային տարրերի դասակարգման մեջ ուղղումներ կամ լրացումներ կատարելու հետ կապված առաջարկությունները կարող են կատարվել Հատուկ միության ցանկացած երկրի իրավասու գերատեսչության, Միջազգային բյուրոյի, (2)(բ) կետի համաձայն՝ Փորձագետների կոմիտեում ներկայացված որեւէ միջկառավարական կազմակերպության եւ նման առաջարկություններ ներկայացնելու համար Փորձագետների կոմիտեի կողմից հատուկ հրավիրված ցանկացած այլ երկրի կամ կազմակերպության կողմից: Առաջարկություններն ուղարկվում են Միջազգային բյուրո, որը դրանք ներկայացնում է Փորձագետների կոմիտեի անդամներին ու դիտորդներին ոչ ուշ, քան Փորձագետների կոմիտեի նստաշրջանից երկու ամիս առաջ, որտեղ ներկայացված առաջարկները քննարկվելու են:

6) ա) Փորձագետների կոմիտեի յուրաքանչյուր անդամ պետություն ունի մեկ քվե:

բ) Փորձագետների կոմիտեի կողմից որոշումներ ընդունելու համար պահանջվում է ներկա գտնվող եւ քվեարկությանը մասնակցող երկրների ներկայացուցիչների ձայների պարզ մեծամասնությունը:

գ) Ցանկացած որոշում ընդունելու համար, որը ներկա եւ քվեարկությանը մասնակցած երկրների ներկայացուցիչների ձայների մեկ հինգերորդի կողմից գնահատվում է որպես Պատկերային տարրերի դասակարգման հիմնական կառուցվածքի փոփոխության հանգեցնող կամ վերադասակարգման զգալի աշխատանք պահանջող որոշում,

պահանջվում է ներկա գտնվող եւ քննարկմանը մասնակցող երկրների ներկայացուցիչների ձայների երեք քառորդը:

դ) Ձեռնպահ մնալը քվե չի համարվում:

ՀՈՂՎԱԾ 6

Փոփոխությունների եւ լրացումների այլ որոշումների ծանուցումը, ուժի մեջ մտնելը եւ հրապարակումը

1) Պատկերային տարրերի դասակարգման փոփոխությունների եւ լրացումների, ինչպես նաեւ Փորձագետների կոմիտեի հանձնարարականների վերաբերյալ նրա ընդունած յուրաքանչյուր որոշման մասին Միջազգային բյուրոն ծանուցում է Հատուկ միության երկրների իրավասու գերատեսչություններին: Փոփոխություններն ու լրացումներն ուժի մեջ են մտնում ծանուցումն ուղարկելու օրվանից 6 ամիս հետո:

2) Միջազգային բյուրոն Պատկերային տարրերի դասակարգման մեջ ներառում է ուժի մեջ մտած փոփոխությունները եւ լրացումները: Փոփոխությունների եւ լրացումների մասին հաղորդումները հրապարակվում են 7-րդ հոդվածում հիշատակված Ասամբլեայի կողմից որոշված պարբերական հրատարակություններում:

ՀՈՂՎԱԾ 7

Հատուկ միության Ասամբլեա

1) ա) Հատուկ միությունն ունի Ասամբլեա, որը բաղկացած է Հատուկ միության երկրներից:

բ) Հատուկ միության յուրաքանչյուր երկրի Կառավարություն ներկայացված է մեկ պատվիրակով, որը կարող է ունենալ տեղակալներ, խորհրդականներ եւ փորձագետներ:

գ) Ասամբլեայի նիստերում, իսկ եթե Ասամբլեան որոշի, ապա նաեւ այնպիսի կոմիտեներում եւ աշխատանքային խմբերում, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կողմից, 5(2)(բ) հոդվածում հիշատակված ցանկացած միջկառավարական կազմակերպություն կարող է ներկայացված լինել դիտորդի կարգավիճակով:

դ) Յուրաքանչյուր պատվիրակության ծախսերը կատարում է նրան նշանակած Կառավարությունը:

2) ա) Համաձայն 5-րդ հոդվածի դրույթների՝ Ասամբլեան.

i) քննարկում է Հատուկ միության պահպանմանն ու զարգացմանը եւ սույն Համաձայնագրի կիրառմանը վերաբերող բոլոր հարցերը.

ii) վերանայման համաժողովների նախապատրաստման հետ կապված՝

հանձնարարականներ է տալիս Միջազգային բյուրոյին.

iii) քննարկում եւ հաստատում է Գլխավոր տնօրենի հաշվետվությունները եւ գործունեությունը, որոնք վերաբերում են Հատուկ միությանը, եւ Հատուկ միության իրավասության մեջ մտնող հարցերով նրան տալիս է բոլոր անհրաժեշտ ցուցումները.

iv) որոշում է ծրագիրը եւ ընդունում է Հատուկ միության երկամյա բյուջեն եւ հաստատում է նրա վերջնական հաշվետվությունները.

v) ընդունում է Հատուկ միության ֆինանսական կանոնակարգը.

vi) որոշում է, անգլերենից եւ ֆրանսերենից բացի, այլ լեզուներով Պատվերային տարրերի դասակարգման պաշտոնական տեքստերի նախապատրաստման հարցը.

vii) ստեղծում է այնպիսի կոմիտեներ եւ աշխատանքային խմբեր, որոնք անհրաժեշտ է համարում Հատուկ միության նպատակների իրականացման համար.

viii) հաշվի առնելով (1)(գ) կետի դրույթները՝ որոշում է, թե Հատուկ միության անդամ որ երկրներին եւ որ միջկառավարական ու միջազգային ոչ կառավարական կազմակերպություններին է թույլատրվում դիտորդի կարգավիճակով մասնակցել հանդիպումներին, ինչպես նաեւ իր ստեղծած ցանկացած կոմիտեի եւ աշխատանքային խմբի նիստերին.

ix) Հատուկ միության նպատակներին հասնելու համար իրականացնում է ցանկացած այլ գործողություն.

x) կատարում է սույն Համաձայնագրին համապատասխան բոլոր այլ գործառույթները.

բ) այն հարցերով, որոնք հետաքրքրություն են ներկայացնում նաեւ այլ Միությունների համար, որոնց ղեկավարումն իրականացնում է Կազմակերպությունը, Ասամբլեան որոշումներ ընդունում է՝ խորհրդակցելով Կազմակերպության համակարգող կոմիտեի հետ:

3) ա) Ասամբլեայի անդամ յուրաքանչյուր պետություն ունի մեկ քվե:

բ) Ասամբլեայի անդամ երկրների կեսը կազմում է քվորումը:

գ) Քվորումի բացակայության դեպքում Ասամբլեան կարող է ընդունել որոշում, սակայն Ասամբլեայի բոլոր նման որոշումները, բացառությամբ իր սեփական կանոններին վերաբերող որոշումների, պարտադիր են դառնում միայն հետեւյալ պայմանները պահպանելու դեպքում: Միջազգային բյուրոն այդպիսի որոշումներն ուղարկում է Ասամբլեայի այն անդամ երկրներին, որոնք ներկայացված չեն եղել, եւ առաջարկում է որոշումներն ուղարկելու ամսաթվից եռամսյա ժամկետում գրավոր հայտնել՝ իրենք քվեարկել՝ են, թե ձեռնպահ են մնացել: Եթե այդ ժամկետի ավարտին այդ եղանակով կողմ, դեմ կամ ձեռնպահ քվեարկած անդամների քանակը հասնի առնվազն այն քանակին, որը չէր բավականացնում տվյալ նստաշրջանում քվորում ունենալու համար, այդպիսի որոշումներն ուժի մեջ են մտնում՝ պայմանով, որ միաժամանակ պահպանվի անհրաժեշտ մեծամասնություն:

դ) Հաշվի առնելով 11(2) հոդվածի դրույթները՝ Ասամբլեայի որոշումներն ընդունվում են տրված ձայների երկու երրորդով:

ե) Ձեռնպահների ձայները հաշվի չեն առնվում:

զ) Պատվիրակը կարող է ներկայացնել միայն մեկ երկիր եւ քվեարկել միայն նրա անունից:

4) ա) Ասամբլեայի հերթական նստաշրջանը հրավիրվում է երկու տարին մեկ անգամ՝ Գլխավոր տնօրենի գումարմամբ, եւ բացառիկ դեպքերից բացի՝ նույն ժամանակ եւ նույն տեղում, ինչ Կազմակերպության Գլխավոր ասամբլեան:

բ) Ասամբլեան հրավիրվում է արտակարգ նստաշրջանի, որը գումարվում է Գլխավոր տնօրենի նախաձեռնությամբ կամ Ասամբլեայի անդամ երկրների մեկ քառորդի պահանջով:

գ) Յուրաքանչյուր նստաշրջանի օրակարգ նախապատրաստում է Գլխավոր տնօրենը:

5) Ասամբլեան ընդունում է ընթացակարգի իր կանոնները:

1) ա) Հատուկ միության վարչական բնույթի առաջադրանքներն իրականացվում են Միջազգային բյուրոյի կողմից:

բ) Միջազգային բյուրոն նախապատրաստում է, մասնավորապես, նիստերը եւ կատարում է Ասամբլեայի, Փորձագետների կոմիտեի եւ նման այլ կոմիտեների եւ աշխատանքային խմբերի քարտուղարության աշխատանքները, որոնք կարող են սահմանվել

Ասամբլեայի կամ Փորձագետների կոմիտեի կողմից:

գ) Գլխավոր տնօրենը Հատուկ միության գլխավոր գործադիր մարմինն է եւ ներկայացնում է Հատուկ միությունը:

2) Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված աշխատակազմի ցանկացած անդամ, առանց քվեարկելու իրավունքի, մասնակցում են Ասամբլեայի, Փորձագետների կոմիտեի եւ նման այլ կոմիտեների եւ աշխատանքային խմբերի բոլոր նիստերին, որոնք կարող են ստեղծվել Ասամբլեայի կամ Փորձագետների կոմիտեի կողմից: Գլխավոր տնօրենը կամ նրա կողմից նշանակված աշխատակազմի անդամը հանդիսանում են այդ մարմինների ex officio ex officio քարտուղարը:

3) ա) Ասամբլեայի ցուցումներին համապատասխան՝ Միջազգային բյուրոն կազմակերպում է վերանայման համաժողովներ:

բ) Վերանայման համաժողովներին նախապատրաստվելու կապակցությամբ Միջազգային բյուրոն կարող է խորհրդակցել միջկառավարական եւ միջազգային ոչ կառավարական կազմակերպությունների հետ:

գ) Գլխավոր տնօրենը եւ նրա կողմից նշանակված անձինք վերանայման կոնֆերանսների քննարկումներին մասնակցում են առանց քվեարկելու իրավունք ունենալու:

4) Միջազգային բյուրոն կատարում է իր վրա դրված ցանկացած այլ առաջադրանք:

ՀՈՂՎԱԾ 9 Ֆինանսներ

1) ա) Հատուկ միությունն ունի բյուջե:

բ) Հատուկ միության բյուջեն ներառում է զուտ Հատուկ միության եկամուտները եւ ծախսերը, նրա վճարումները Միությունների ընդհանուր ծախսերի բյուջե, ինչպես նաեւ, համապատասխան դեպքերում, հատկացումներ կազմակերպության Կոնֆերանսների բյուջեին:

գ) Միությունների համար ընդհանուր են համարվում այն ծախսերը, որոնք չեն վերաբերում բացառապես տվյալ Հատուկ միությանը, այլ միաժամանակ մեկ կամ մի քանի այլ միությունների, որոնց կառավարումն իրականացնում է Կազմակերպությունը: Այդ ընդհանուր ծախսերում Հատուկ միության մասնաբաժինը համապատասխանում է նման ծախսերում նրա շահագրգռվածությանը:

2) Հատուկ միության բյուջեն ստեղծվում է՝ պատշաճ ձևով հաշվի առնելով մյուս Միությունների բյուջեների հետ համակարգման պահանջները, որոնց կառավարումն իրականացնում է Կազմակերպությունը:

3) Հատուկ միության բյուջեն ֆինանսավորվում է հետեւյալ աղբյուրներից.

i) Հատուկ միության երկրների վճարներից.

ii) Հատուկ միությանը վերաբերող՝ Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար վճարներից եւ մուծումներից.

iii) Միջազգային բյուրոյի՝ Հատուկ միությանը վերաբերող հրապարակումների վաճառքից կամ հոնորարներից.

iv) նվիրատվություններից, կտակած միջոցներից եւ լրավճարներից.

v) վարձավճարներից, տոկոսներից եւ այլ տարբեր եկամուտներից.

4) ա) (3)(i) կետում նշված իր վճարը որոշելու համար Հատուկ միության յուրաքանչյուր երկիր դասվում է այն նույն դասին, որին նա պատկանում է Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան միությունում, եւ իր տարեկան վճարները մուծում է այն նույն միավորների թվի հիման վրա, որը այդ Միությունում հաստատվում է տվյալ դասի համար:

բ) Հատուկ միության յուրաքանչյուր երկրի տարեկան վճարը հավասար է այն գումարին, որը հարաբերվում է բոլոր երկրների կողմից Հատուկ միության բյուջե մուծման ենթակա վճարների ընդհանուր գումարին այնպես, ինչպես նրա միավորների քանակն է հարաբերվում վճարներ մուծող բոլոր երկրների միավորների ընդհանուր քանակին:

գ) Վճարները ենթակա են մուծման յուրաքանչյուր տարվա հունվարի մեկից:

դ) Այն երկիրը, որը գումարային պարտք ունի, Հատուկ միության բոլոր մարմիններում կորցնում է քվեարկելու իրավունքը, եթե նրա պարտքի գումարը հավասար է կամ գերազանցում է նախորդ երկու տարիների համար մուծման ենթակա վճարների գումարին: Այնուամենայնիվ, Հատուկ միության այդ մարմիններից ցանկացածը կարող է թույլատրել այդպիսի երկրին շարունակել օգտվել քվեարկելու իրավունքից այդ մարմնում, եթե եւ քանի դեռ նա համոզված է, որ վճարման ուշացումը կատարվել է բացառիկ եւ անխուսափելի պայմաններում:

ե) Այն դեպքում, երբ միևնույն կողմից ֆինանսական ժամանակաշրջանի սկիզբը բյուջեն ընդունված չէ՝ ֆինանսական կանոնակարգերի համաձայն, գործում է նախորդ տարվա մակարդակի բյուջեն:

5) Հատուկ միության անունից Միջազգային բյուրոյի կողմից մատուցված ծառայությունների համար գանձվող վճարների եւ գանձույթների չափը սահմանվում է Գլխավոր տնօրենի կողմից, որն այդ մասին զեկուցում է Ասամբլեային:

6) ա) Հատուկ միությունն ունի շրջանառու միջոցների ֆոնդ, որը բաղկացած է Հատուկ միության յուրաքանչյուր երկրի կողմից մուծվող միանվագ վճարներից: Եթե շրջանառու միջոցների ֆոնդը դառնում է ոչ բավարար, ապա Ասամբլեան որոշում է ընդունում դրա ավելացման մասին:

բ) Նշված ֆոնդում յուրաքանչյուր երկրի սկզբնական վճարի չափը կամ այդ ֆոնդի ավելացման նրա մասը համամասնական են այդ երկրի վճարին այն տարվա համար, երբ ստեղծվել է ֆոնդը, կամ որոշում է ընդունվել դրա ավելացման մասին:

գ) Այդ համամասնությունը եւ վճարման պայմանները, Գլխավոր տնօրենի առաջարկությամբ, հաստատվում են Ասամբլեայի կողմից՝ Կազմակերպության համակարգող

կոմիտեի հետ խորհրդակցելուց հետո:

7) ա) Կենտրոնական գրասենյակի մասին համաձայնագրում, որը կնքվում է այն երկրի հետ, որի տարածքում Կազմակերպությունն ունի իր կենտրոնական գրասենյակը, նախատեսվում է, որ այն դեպքերում, երբ շրջանառու միջոցների հիմնադրամը կդառնա ոչ բավարար, այդ երկիրը կտրամադրի կանխավճար: Այդ կանխավճարների գումարը եւ տրամադրման պայմանները յուրաքանչյուր դեպքում հանդիսանում են այդպիսի երկրի եւ Կազմակերպության միջեւ առանձին համաձայնագրի առարկա:

բ) Ինչպես "ա" ենթակետում նշված երկիրը, այնպես էլ Կազմակերպությունը իրավունք ունեն գրավոր ծանուցման միջոցով չեղյալ հայտարարել կանխավճարների տրամադրման մասին պարտավորությունը: Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում այն տարվա ավարտից երեք տարի անց, որում կատարվել է այդ ծանուցումը:

8) Հաշվետվությունների վերստուգումն իրականացվում է ֆինանսական կանոնակարգերի համաձայն՝ Հատուկ միության մեկ կամ մի քանի երկրների կամ արտաքին վերստուգողների կողմից: Նրանք նշանակվում են Ասամբլեայի կողմից՝ իրենց համաձայնությամբ:

ՀՈՂՎԱԾ 10

Համաձայնագրի վերանայումը

1) Սույն Համաձայնագիրը ժամանակ առ ժամանակ կարող է վերանայվել Հատուկ միության երկրների հատուկ համաժողովի կողմից:

2) Վերանայման ցանկացած համաժողով գումարելու մասին որոշում ընդունվում է Ասամբլեայի կողմից:

3) 7-րդ, 8-րդ, 9-րդ եւ 11-րդ հոդվածների դրույթները փոփոխվում են 11-րդ հոդվածի դրույթներին համաձայն՝ վերանայման համաժողովի կողմից:

ՀՈՂՎԱԾ 11

Համաձայնագրի որոշ դրույթների փոփոխումները

1) 7-րդ, 8-րդ, 9-րդ հոդվածներում եւ սույն հոդվածում փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ կարող են արվել Հատուկ միության ցանկացած երկրի կամ Գլխավոր տնօրենի կողմից: Գլխավոր տնօրենը նման առաջարկություններն ուղարկում է Հատուկ միության երկրներին՝ Ասամբլեայի կողմից դրանք քննարկվելուց առնվազն վեց ամիս առաջ:

2) 1-ին կետում նախատեսված հոդվածների փոփոխությունները ընդունվում են Ասամբլեայի կողմից: Ընդունման համար պահանջվում է տրված ձայների երեք քառորդը՝ պայմանով, որ 7-րդ հոդվածի եւ սույն կետի ցանկացած փոփոխություն ընդունվում է տրված ձայների չորս հինգերորդով:

3) ա) 1-ին կետում նախատեսված հոդվածների ցանկացած փոփոխություն ուժի մեջ է մտնում մեկ ամիս անց, երբ դրա ընդունման մասին, յուրաքանչյուր երկրի սահմանադրական ընթացակարգին համապատասխան, գրավոր ծանուցումները Գլխավոր տնօրենի կողմից ստացվել են ուղղումն ընդունելու պահին Հատուկ միության անդամ հանդիսացող երկրների երեք քառորդից:

բ) Նշված հոդվածներում այդ ձեւով ընդունված ցանկացած փոփոխություն պարտադիր է այն երկրների համար, որոնք փոփոխություններն ուժի մեջ մտնելու պահին Հատուկ միության անդամներ են. սակայն ցանկացած փոփոխություն, որը ավելացնում է Հատուկ միության երկրների ֆինանսական պարտավորությունները, պարտադիր է միայն այն երկրների համար, որոնք ծանուցել են իրենց կողմից այդպիսի փոփոխությունն ընդունվելու մասին:

գ) "ա" ենթակետի դրույթներին համապատասխան ընդունված ցանկացած փոփոխություն պարտադիր է բոլոր այն երկրների համար, որոնք Հատուկ միության անդամ են դառնում "ա" ենթակետի դրույթներին համապատասխան՝ նշված փոփոխությունն ուժի մեջ մտնելու ամսաթվից հետո:

ՀՈՂՎԱԾ 12

Համաձայնագրի Կողմ դառնալը

1) Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի ցանկացած Կողմ երկիր կարող է դառնալ սույն Համաձայնագրի Կողմ՝

i) Համաձայնագիրն ստորագրելու, այնուհետեւ վավերագիրն ի պահ հանձնելու, կամ

ii) միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելու միջոցով:

2) Վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ են հանձնվում Գլխավոր տնօրենին:

3) Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի Ստոկհոլմյան ակտի 24-րդ հոդվածի դրույթները կիրառվում են սույն Համաձայնագրի նկատմամբ:

4) 3-րդ կետը ոչ մի դեպքում չպետք է հասկացվի որպես Հատուկ միության որեւէ երկրի կողմից այն տարածքի վերաբերյալ փաստացի իրավիճակի ճանաչում կամ լռելյայն ընդունում, որի նկատմամբ, նշված կետի համաձայն, սույն Համաձայնագիրը կիրառվում է այլ երկրի կողմից:

ՀՈՂՎԱԾ 13

Համաձայնագրի ուժի մեջ մտնելը

1) Առաջին հինգ երկրների կողմից վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնվելու դեպքում սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում հինգերորդ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելուց հետո երեք ամիս անց:

2) Ցանկացած երկրի նկատմամբ, բացառությամբ այն երկրների, որոնց նկատմամբ սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1-ին կետի համաձայն, Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում այն ամսաթվից երեք ամիս հետո, երբ Գլխավոր տնօրենի կողմից ծանուցվել է դրա վավերացման կամ միացման մասին, եթե վավերագրում կամ միացման ակտում նշված չի եղել ավելի ուշ ամսաթիվ: Վերջինիս դեպքում սույն Համաձայնագիրն այդ երկրի նկատմամբ ուժի մեջ է մտնում նշված ամսաթվից:

3) Վավերացումը կամ միացումը ինքնաբերաբար հանգեցնում են սույն Համաձայնագրով սահմանված բոլոր դրույթների ընդունմանը եւ բոլոր առավելությունների տրամադրմանը:

ՀՈՂՎԱԾ 14

Համաձայնագրի գործողության ժամկետը

Սույն Համաձայնագիրը գործում է սույն ժամկետով, ինչ Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիան:

ՀՈՂՎԱԾ 15

Չեղյալ հայտարարելը

1) Հատուկ միության ցանկացած երկիր կարող է չեղյալ հայտարարել սույն Համաձայնագիրը Գլխավոր տնօրենին ծանուցում ուղարկելու միջոցով:

2) Չեղյալ հայտարարումն ուժի մեջ է մտնում ծանուցումը Գլխավոր տնօրենի ստանալու օրվանից մեկ տարի հետո:

3) Սույն հոդվածով նախատեսված չեղյալ հայտարարելու իրավունքը որեւէ երկրի կողմից չի կարող իրականացվել մինչեւ Հատուկ միության անդամ դառնալու օրվանից հինգ տարվա ժամկետը լրանալը:

ՀՈՂՎԱԾ 16

Վեճեր

1) Հատուկ միության երկու կամ ավելի երկրների միջեւ ծագած՝ սույն Համաձայնագրի կիրառմանը կամ մեկնաբանմանը վերաբերող՝ բանակցությունների միջոցով չկարգավորված ցանկացած վեճ նշված երկրներից որեւէ մեկի կողմից դիմումի միջոցով կարող է ներկայացվել Միջազգային դատարան՝ Դատարանի Կանոնադրությանը համապատասխան, եթե միայն նշված երկրները համաձայնության չեն եկել այլ եղանակով վեճը լուծելու հարցում: Վեճը Դատարան ներկայացնող երկիրը այդ մասին տեղեկացնում է Միջազգային բյուրոյին: Միջազգային բյուրոն այդ մասին տեղեկացնում է Հատուկ միության այլ երկրներին:

2) Սույն Համաձայնագիրն ստորագրելիս կամ վավերագիրը կամ միանալու մասին փաստաթուղթն ի պահ հանձնելիս յուրաքանչյուր երկիր կարող է հայտարարել, որ պարտավորված չէ 1-ին կետի դրույթներով: Նման վեճի առկայության դեպքում հայտարարություն արած երկրի եւ Հատուկ միության այլ երկրի միջեւ չեն կիրառվում 1-ին կետի դրույթները:

3) Ցանկացած երկիր, որը հայտարարություն է արել 2-րդ կետի դրույթների համաձայն, ցանկացած ժամանակ կարող է իր հայտարարությունը չեղյալ համարել Գլխավոր տնօրենին ուղարկված ծանուցման միջոցով:

ՀՈՂՎԱԾ 17

Ստորագրումը, լեզուները, ավանդապահի գործառույթները, ծանուցումները

1) ա) Սույն Համաձայնագիրն ստորագրվում է մեկ բնօրինակով՝ անգլերեն եւ ֆրանսերեն. ընդ որում երկու տեքստերն էլ հավասարազոր են:

բ) Սույն Համաձայնագիրն ստորագրման համար բաց է Վիեննայում մինչեւ 1973 թ. դեկտեմբերի 31-ը:

գ) Սույն Համաձայնագրի բնօրինակը ի պահ է տրվում Գլխավոր տնօրենին այն բանից հետո, երբ դա այլևս բաց չէ ստորագրման համար:

2) Պաշտոնական տեքստերը նախապատրաստվում են Գլխավոր տնօրենի կողմից՝ շահագրգիռ Կառավարությունների հետ խորհրդակցելուց հետո, այն լեզուներով, որոնք կորոշի Ասամբլեան:

3) ա) Գլխավոր տնօրենը իր կողմից վավերացված սույն Համաձայնագրի նշված տեքստերի երկու պատճեններն ուղարկում է այն երկրների Կառավարություններին, որոնք դա ստորագրել են, եւ, հարցման դեպքում, ցանկացած այլ երկրի Կառավարության:

բ) Գլխավոր տնօրենը սույն Համաձայնագրի ցանկացած փոփոխության երկու պատճենները վավերացնելուց հետո ուղարկում է Հատուկ միության բոլոր երկրների Կառավարություններին եւ, հարցման դեպքում, ցանկացած այլ երկրի Կառավարության:

գ) Գլխավոր տնօրենը սույն Համաձայնագիրն ստորագրած կամ դրան միացած ցանկացած երկրի Կառավարության հարցման հիման վրա տրամադրում է իր կողմից վավերացված՝ Պատկերային տարրերի դասակարգման երկու պատճեններ՝ անգլերեն կամ ֆրանսերեն:

4) Գլխավոր տնօրենը սույն Համաձայնագիրը գրանցում է Միավորված ազգերի կազմակերպության քարտուղարությունում:

5) Գլխավոր տնօրենը Արդյունաբերական սեփականության պաշտպանության մասին Փարիզյան կոնվենցիայի Կողմ բոլոր երկրների Կառավարություններին ծանուցում է.

i) (i) (1) կետին համապատասխան՝ ստորագրությունների մասին.

ii) 12(2) հոդվածի համաձայն՝ վավերագրերը կամ միանալու մասին փաստաթղթերն ի պահ հանձնելու մասին.

iii) 13(1) հոդվածի համաձայն՝ սույն Համաձայնագրի ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

iv) 4(5) հոդվածի համաձայն ներկայացված հայտարարությունների մասին.

v) 12(3) հոդվածի համաձայն արված ծանուցումների եւ հայտարարությունների մասին.

vi) 16(2) հոդվածի համաձայն արված հայտարարությունների մասին.

vii) 16(3) հոդվածի համաձայն չեղյալ հայտարարելու վերաբերյալ ստացված ծանուցումների մասին.

viii) 11(3) հոդվածի համաձայն՝ սույն Համաձայնագրի փոփոխությունների ընդունման մասին.

ix) նման փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթվի մասին.

x) 15-րդ հոդվածի համաձայն արված չեղյալ հայտարարումների մասին:

Ուժի մեջ է մտել 06.03.2005 թ.